# ՈՐՈՇՈՒՄ
## 09 ՓԵՏՐՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վանաձոր համայնքի Ֆրիտյոֆ Նանսենի անվան թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով 05 դեկտեմբերի 2025թ. կազմակերպված «ՎՀ-ԹԻ2-ԳՀԱՊՁԲ-01/26» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՄԱՐՏԻՆ ԵՎ ԿՈ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև Մասնակից):

Վանաձոր համայնքի Ֆրիտյոֆ Նանսենի անվան թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՎՀ-ԹԻՎ2-ԳՀԱՊՁԲ-01/26» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 16.01.2026թ. «Մարտին և Կո» ՍՊԸ-ին ծանուցվել է պայմանագրի նախագիծ, որի հաստատման և ներկայացման համար օրենքով սահմանված վերջնաժամանակը եղել է 2026թ. հունվարի 23-ը:

«Մարտին և Կո» ՍՊԸ-ի ներկայացուցիչը 2026թ. հունվարի 23-ին Վանաձոր համայնքի Ֆրիտյոֆ Նանսենի անվան թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ին է ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծը, որի տեխնիկական բնութագրերում կատարված են եղել արհեստական փոփոխություններ, մասնավորապես՝ Պայմանագրի նախագծով, որը սահմանված է եղել նաև հրավերի տեխնիկական բնութագրով և Մասնակցի կողմից հաստատված Հավելված 1.1-ով 37-րդ չափաբաժնի համար՝ «Նոր Զելանդական կամ համարժեք Անքոր» բառերը փոխարինվել են «Նոր Զելանդական, Անքոր կամ համարժեք» բառերով: Նմանատիպ փոփոխություններ կատարվել են նաև պայմանագրի այլ չափաբաժիններում, ուստի մասնակցին առաջարկվել է մինչև սահմանված ժամկետի վերջնաժամկետը պայմանագիրը հաստատել ներկայացված տարբերակով, կամ պայմանագրի նախագծով սահմանված այն չափաբաժինների մասով, որոնցում մասնակցի կողմից փոփոխություններ չեն կատարվել ներկայացնել առանձին պայմանագիր և ներկայացնել պատվիրատուին, որպեսզի պատվիրատուն հնարավորություն ունենա այդ չափաբաժինների մասով կնքի պայմանագիր, հակառակ դեպքում պայմանագիրը ամբողջությամբ չի կնքվելու պատվիրատուի կողմից, ինչն էլ համարվելու է, որպես ընտրված մասնակցի կողմից գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտում: սակայն «Մարտին և Կո» ՍՊԸ-ն սահմաված ժամկետում չի ներկայացրել պահանջվող պայմանագիրը

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի բ պարբերությամբ՝ (որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց) և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը **որոշում եմ** ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

<table>
<tr><th colspan="4">Գնման ընթացակարգի</th><th colspan="4">Մասնակցի</th><th rowspan="3">Պատվիրատուի անվանումը</th><th rowspan="3">Իրավական հիմք</th><th rowspan="3">Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝</th></tr>
<tr><th rowspan="2">ծածկագիրը</th><th colspan="3">չափաբաժնի</th><th rowspan="2">Անվանումը</th><th rowspan="2">ՀՎՀՀ</th><th rowspan="2">գործունեության հասցեն</th><th rowspan="2">գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքներ ի առաջացման</th></tr>
<tr><th>համարը</th><th>անվանումը</th><th>գնման գինը /ՀՀ դրամ/</th></tr>
</table>

| | | | | | | | ամսաթիվը | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| ՎՀ-ԹԻՎ2-ԳՀԱՊՁԲ-01/26 | 1.3.8.12.13.22.29.37.55.60.65.70.72.77.79.90.103.105.106. | 1 Աղ<br>3 Արիշտա<br>8 Բրինձ կլոր2<br>12 Բուսական յուղ /ձեթ/<br>13 Բուսական յուղ /ձիթապտղի<br>22 Եգիպտացորենի պահածո<br>29 Լոբի հատիկավոր<br>37 Կարագ<br>55 Հավի կրծքամիս<br>60 Հնդկածավար<br>65 Մակարոն-1<br>70 Մուրաբա<br>72 Ոլոռ /պահածո/<br>79 Ոսպ<br>90 Պղպեղ՝ աղացած սև /քաղցր/<br>103 Վարսակի փաթիլներ<br>105 Տավարի միս<br>106 Տոմատի մածուկ | 1 18850<br>3 130000<br>8 147200<br>12 262400<br>13 312000<br>22 260000<br>29 108000<br>37 2700000<br>55 1625000<br>60 105000<br>65 90000<br>70 11500<br>72 156000<br>77 300000<br>79 130000<br>90 24300<br>103 84000<br>105 2960000<br>106 74100 | «ՄԱՐՏԻՆ ԵՎ ԿՈ» ՍՊԸ | 06946672 | ք. Վանաձոր, Մյասնիկյան 1 փկղ | 23.01.2026թ. | «Վանաձոր համայնքի Ֆրիտյոֆ Նանսենի անվան թիվ 2մանկապարտեզ» ՀՈԱԿ | Հրաժարվել է պայմանագիր կնքելուց | Սահմանված -ամկետում չի ներկայացրել պայմանագրի իր կողմից հաստատված տարբերակը: |

ՏՆՕՐԵՆ՝ Ա. ԴԱՐԲԻՆՅԱՆ